«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ-ի 2020թ.
(4-րդ պայմանագրային տարի)
ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ

- ՀՀ կառավարության կողմից ջրային համակարգերը վարձակալության հանձնելու նպատակով միջազգային մրցույթի կազմակերպում,
- 2017-2031 թվականների համար բազիսային սակագների և դրանց ճշգրտման մեխանիզմների ձևավորում և ամրագրում,
- «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ 15-ամյա վարձակալության պայմանագրի ստորագրում:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի 2020թ. սակագների վերանայում



ՀԾԿՀ-ի, ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ընկերության միջև տեղի ունեցած բանակցությունների արդյունքում Վարձակալության պայմանագրի կողմերի միջև 25.07.2019թ. ստորագրվել է **թիվ 13 համաձայնագիրը**, որով՝

1. Վարձակալության վճարի ամբողջական գումարը 89,749 մլրդ դրամից նվազեցվեց 80,426 մլրդ դրամ (9,323 մլրդ դրամով պակաս),
2. «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ԼՋ №0001 լիցենզիայի պայմանների 3-րդ հավելվածում *2020 և 2021 թվականների համար բազիսային մանրածախ սակագները՝ 202.8 դրամ/մ³-ից և 211.2 դրամ/մ³-ից փոփոխվեցին 176.4 դրամ/մ³՝ միաժամանակ նշված տարիների համար ամրագրելով առավել իրատեսական մանրածախ ջրամատակարարման կանխատեսվող բազիսային ծավալներ*:

Հաշվի առնելով վերը նշված փոփոխությունները և բազիսային սակագնի ճշգրտման գործոնները՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն 07.08.2019թ. հերթական անգամ դիմել է ՀԾԿՀ՝ վարձակալության 4-րդ տարվա (2020թ.) համար ծառայությունների մատուցման ճշգրտված սակագները սահմանելու հայտով, որով մանրածախ ծառայությունների մատուցման գումարային սակագինն առաջարկվել է՝

181,807 դրամ/խմ (ներառյալ ԱԱՀ)



Համաձայն սակագների ճշգրտման մեխանիզմների՝ սակագները յուրաքանչյուր տարի ենթակա են պարտադիր ճշգրտման՝ միայն հետևյալ գործոններով պայմանավորված.

- ✓ **մանրածախ ջրամատակարարման ծավալի փոփոխություն,**
- ✓ **սղաճ,**
- ✓ **ընկերությանը մատակարարվող էլեկտրական էներգիայի սակագների փոփոխություն,**
- ✓ **ջրային համակարգն այլ նպատակներով օգտագործումից և խմելու ջուրը ոռոգման նպատակով մատակարարելուց ստացվող լրացուցիչ հասույթով պայմանավորված նվազեցում:**

Սակագների ճշգրտման հաշվարկներում ներառված մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների

ՄՈՆԻԹՈՐԻՆԳ



Ջրամատակարարման լրացուցիչ ծավալները հաշվարկվել են

1. Ջրոյական սպառում ունեցող սպառողների մոտ՝ մոնիթորինգի արդյունքում գրանցված և ընկերության բազայով ներկայացված ցուցմունքների տարբերությամբ,
2. Ապօրինի ջրօգտագործման, ջրաչափերի շրջանցման, կապարակնիքների բացակայության և այլ խախտումների համար՝ ներանցման խողովակի թողունակությամբ՝ ջրի շարժման 1,5 մ/վրկ արագությամբ և ջրամատակարարման հրապարակված գրաֆիկով:



ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

№	Տարածք	Այցերի քանակը (հատ)	Արձանագրված խախտումների քանակը (հատ)	Մոնիթորինգի արդյունքում հաշվարկված լրացուցիչ ծավալ (խմ)
1	Երևանի սպասարկման տարածք	1370	95	483 362
2	Մարզերի սպասարկման տարածք	930	115	294 287
	ԸՆԴԱՄԵՆԸ	2300	210	777 649

Արդյունքում ՀԾԿՀ-ի աշխատակազմի կողմից հաշվարկված մանրածախ ծառայությունների մատուցման ճշգրտված գումարային սակագինը կազմել է՝

180,174 (ներառյալ ԱԱՀ)

Անվանումներ	ՀԱՅՏ	ՀԾԿՀ
Բազիսային սակագին	176,4	176,4
Մանրածախ ծավալի փոփոխությամբ ճշգրտում	1,643	0,115
Սղաճով պայմանավորված ճշգրտում	5,261	5,152
Էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությամբ ճշգրտում	-0,963	-0,969
Այլ եկամուտներով պայմանավորված ճշգրտում	-0,534	-0,524
Մանրածախ գումարային սակագին (ներառյալ ԱԱՀ)	**181,807**	**180,174**

ՀԾԿՀ-ի աշխատակազմի կողմից հաշվարկված մանրածախ ծառայությունների մատուցման ճշգրտված գումարային սակագինը կազմել է՝ 180,174 (ներառյալ ԱԱՀ)



«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ԼՋ №0001 լիցենզիայի պայմանների 3-րդ հավելվածի 13-րդ կետի համաձայն՝ եթե որևէ տարվա համար հաշվարկված Մանրածախ ծառայությունների մատուցման ճշգրտված գումարային սակագնի և բաժանորդների համար փաստացի գործող գումարային գնի տարբերությունը չի գերազանցում 0.5%-ը, ապա տվյալ տարվա համար հաստատվում են ծառայությունների մատուցման՝ բաժանորդների համար փաստացի գործող գներին հավասար սակագներ:

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ